հերթական համարների սակ նրա արխիվում պահվող նյութերը լիակատար կերպով արտացոլում են Գալանդերյանի կյանքի և ստեղծագործական ուղին։ Նրա երաժշտական հեղինակությունները մեծ մասամբ մոնկական են. կան և քնարական, գերազանցապես պարուրված թախծի ու կարոտի մոտիվներով։

Վ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ

ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1953 թ. հունիսի 20-ին Հայկական ՍՍՌ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի նիստը, որտեղ լսվեց Պատմության ինստիտուտի կրտսեր գիտական աշխատակից Դերենիկ Սուրենի Վարդումյանի «Լոռվա գյուղացիության կոլտնտեսային կենցաղը» և Վլադիմիր Նահապետի Ղազախեցյանի «Հայկական ՍՍՌ-ն Մեծ բեկման տարում» (1929) դիսերտացիաների հրապարակային պաշտպանությունը, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

Ընկ. Վարդումյանի դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներ՝ դոկտոր-պրոֆեսոր Է. Աղայանը, պատմ. գիտությունների թեկնածուներ՝ Է. Կարապետյանը և Վ. Բդոյանը, ինչպես և ելույթ ունեցող ընկերները նշեցին «Լոռվա գյուղացիության կոլտնտեսային կենցաղը» թեմայով դիսերտացիոն աշխատանքի արժանիքները և միջնորդեցին գիտական խորհրդի առաջ ընկ. Վարդումյանին շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Վ. Ղազախեցյանի դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներ՝ դոկտոր-պրոֆեսոր Վ. Ռշտունին, էկոնոմիկական գիտությունների թեկնածու Ս. Խրիմյանը և պատմական գիտությունների թեկնածու Հ. Կարապետյանը նույնպես նշեցին ընկ. Ղազախեցյանի դիսերտացիոն աշխատանքի արժանիքները և միջնորդեցին՝ դիսերտանտին շնորհելու նրա հայցած գիտական աստիճանը։

Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը Դ. Ս. Վարդումյանին և Վ. Ն. Ղազախեցյանին շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

27 (6—53 թ.

* * *

1953 թ. հուլիսի 1-ին և 2-ին Հայկական ՍՍՌ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Գրականության և արվեստի ինստիտուտի ու Լեզվի ինստիտուտի միացյալ գիտական խորհրդի գոնրաց նիստը, որտեղ լսվեցին հետևյալ դիսերտացիաների հրապարակային պաշտպանությունները.

1. Սդիշե Ավետիսի Մարտիկյան.— թեման՝ «Նկարիչ Ստեփան Աղաջանյանի ստեղծագործությունը»՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

2. Արտաշես Բալասանի Կարինյան.— թեման՝ «Հայ պարբերական մամուլի պատմությունից»՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

3. Մատթևոս Հովհաննեսի Մուրադյան.— թեման՝ «Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության ներմուծումը հայ երաժշտության մեջ»՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

4. Մուշեղ Ղազարոսի Աղայան.— թեման՝ «Հայկական տաղերի երաժշտական արվեստը»՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար։

Ս. Մարտիկյանի «Նկարիչ Ստեփան Աղաջանյանի ստեղծագործությունը» դիսերտացիայի համար որպես պաշտոնական օպոնենտներ հանդես եկան պրոֆեսորներ՝ Գ. Գյուրջյանը և Ս. Ստեփանյանը։

Ա. Կարինյանի դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներն էին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, դոկտոր-պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վ. Պարսամյանը։ Ելույթ ունեցան փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Կարապետյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղարիբյանը։

Մ. Մուրադյանի «Բրիսուափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության ներմուծումը հայ երաժշտության մեջ» դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներն էին՝ պրոֆեսորներ Ա. Տեր-Ղևոնդյանը, Գ. Բուդաղյանը։ Ելույթ ունեցավ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ պրոֆեսոր-դոկտոր Լ. Մելիքսեթ-Բեկը։

Ընկ. Մ. Աղայանի «Հայկական տաղերի երաժշտական արվեստը դիսերտացիայի պաշտոնական օպոնենտներն էին՝ պրոֆեսորներ Ա. Տեր-Ղևոնդյանը և Գ. Բուդաղյանը։

Գրականության և արվեստի ինստիտուտի ու Լեզվի ինստիտուտի միացյալ գիտական խորհուրդը Ա. Բ. Կարինյանին շնորհեց փիլոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ Ե. Ա. Մարտիկյանին, Մ. Հ. Մուրադյանին և Մ. Ղ. Աղայանին՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան։

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.